

նամակը (5), որուն կցուած էին խնդրագիր-
 րըն ու վկայութիւնը մեր յարգելի Եղբոր,
 Նախիջևեանի Արքեպիսկոպոսին, բարեպաշտ
 եւ կրօնասէր անձին, Քեզ եւ Հայ Ժողո-
 վուրդը սիրողին, որ զանոնք (6) մեզի յանձ-
 նեց: Մեծ ցաւ պատճառեց յիշատակութիւ-
 նը շատ ծանր նեղութեանց, որոնք ա՛յնքան
 երկար ատենէ ի վեր զառնօրէն կը շարչա-
 րեն Հայ ցեղը, որ, էր երբեմն, բարզաւաճ
 եւ հնազանդ էր Սուրբ Աթոռին. եւ մենք ա-
 ւելի վիշտ կը զգանք, վասնզի սեւէ կերպով
 զանոնք հեռացնելու կամ զանոնք մեղմելու
 միջոցը դժուարին կ'երեւի, այնպէս որ կը
 թուի՝ թէ սոսկ կրնանք կարեկցութիւն
 յայտնել մեր յոյժ սիրելի որդւոց, առանց
 սեւէ ուրիշ օգնութիւն ընձեռելու բացի ջեր-
 մազին աղօթքներէ Ամենաբարձրեալին ուղ-
 զեալ՝ ամենախորունկ եւ ամենաբարեացա-
 կամ սիրոյ զգացումով: Սակայն եթէ այս
 աղօթքներուն դուք ալ ջերմօրէն կը ցանկաք
 աւելցնել ձեր բաժինը, իրապէս Աստուծոյ
 զարձած սրտերով, ամէն ինչ կրնանք յու-
 սալ Անկէ, որուն զթութեան ճոխութիւնը
 նուազ մեծ չէ քան իր գործերուն զօրութիւ-
 նը:

Սակայն զայս պէտք է բոլորովին նը-
 կատի աւնէք եւ ձեր մտքին մէջ միայն հաս-

(5) Յակոբ Զուղայեցիի նամակին բը-
 նագիրը կը կրէ 1661 Սեպտեմբեր 28 բուա-
 կանը:

(6) Նամակը, խնդրագիրն ու վկայա-
 կանը: